ԳՈՒՅՔԻ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՄՆ Բնակարանաշինության եւ քաղաքաշինության վարչությունը (HUD)

Էապես ավելի շատ գույքի եւ գույքային միավորների ստուգումները կանցկացնի

2021-ի հունիսի 1-ին՝ ապահովելու HUD-ի ֆինանսավորմամբ իրականացվող տան բնակիչների ընդհանուր առողջությունն ու բարեկեցությունը: HUD-ի տեսուչը կարող է շուտով ստուգել ձեր տունը: Բնակիչները նախօրոք կտեղեկացվեն գույքի ղեկավարության կողմից իրենց ստուգման օրվա և ժամի մասին:

Բնակիչների իրավունքներ

- Բնակիչներից պահանջվում է հաղորդել ցանկացած առողջական խնդրի մասին, և տեսուչը կընտրի այլընտրանքային բնակարան՝ ստուգելու համար:
- Բնակիչներն իրավունք ունեն ներկա լինել: Եթե տանը չեք, և ձեր բնակարանը պատահականության սկզբունքով ընտրվում է, ստուգումը կշարունակվի:
- Բնակիչները, ովքեր տանն են, ստուգման ընթացքում կարող են որոշել հեռանալ բնակարանից կամ մնալ այնտեղ:
- Տեսուչը և գույքի ներկայացուցիչը կպահպանեն անվտանգ հեռավորության կանոնները և կկրեն անձնական պաշտպանիչ հանդերձանք (PPE)՝ համաձայն HUD-ի անվտանգության մանրամասն արձանագրությունների, որոնք շարադրված են Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) վերջին ուղեցույցներում:

Լրացուցիչ տեղեկություններ

- Ոչ բոլոր բնակելի վայրերն են ստուգվում, շենքերն ու բնակարանները պատահականորեն ընտրվում են ստուգման օրը:
- Հարցերի դեպքում կապվեք ձեր գույքի ներկայացուցչի կամ HUD-ի Տեխնիկական օժանդակության կենտրոնի հետ (TAC) 888-245-4860 հեռախոսահամարով:
- HUD-ի բազմաբնակարան շենքերի բնակիչները պետք է ծանոթանան HUD-ի “բնակիչների իրավունքների ու պարտականությունների” հետ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար՝ https://www.hud.gov/sites/documents/ DOC_12162.PDF
- Դիտեք HUD-ի քարտուղարի հայտարարությունը ստուգումները վերսկսելու վերաբերյալ հետևյալ հղումով՝ https://www.hud.gov/

Անշարժ գույքի գնահատման կենտրոնի ստուգման գործընթաց

Նպատակը. Ժամանակ առ ժամանակ ֆիզիկական ստուգումներ են պահանջվում՝ համոզվելու, որ ձեր տունն անվտանգ վիճակում է: Ստուգումներն ապահովում են բնակարանների պատշաճ, անվտանգ և սանիտարական վիճակը:

Քայլ 1. Ծանուցում

Գույքի ներկայացուցիչները կտեղեկացնեն ձեզ սպասվող ստուգման մասին:

.

Քայլ 2. Ստուգումից առաջ

Ստուգման մասին ձեր կամ ձեր ընտանիքի ցանկացած հարցի դեպքում կապվեք ձեր գույքի ներկայացուցչի կամ HUD-ի Տեխնիկական օժանդակության կենտրոնի հետ 888-245-4860 հեռախոսահամարով:

Քայլ 3. Ստուգում

Տեսուչներն աշխատում են՝ համաձայն ստուգման մանրամասն արձանագրության, ներառյալ պատշաճ անձնական պաշտպանիչ հանդերձանք կրելը և դրա հետ կապված անվտանգության այլ պահանջները: Տեսուչները նաև ստուգում են գույքի ընդհանուր տարածքները:

.

Քայլ 4. Ստուգումից հետո

Անշարժ գույքի սեփականատերը կամ կառավարիչը կտեղեկացվեն ստուգման արդյունքների մասին: Կապվեք գույքի ներկայացուցչի հետ, եթե ունեք հարցեր ձեր բնակարանի ստուգման վերաբերյալ:

Լրացուցիչ տեղեկությունները կարող եք գտնել այստեղ՝
https://www.hud.gov/program_offices/public_indian_housing/reac

Armenian